




ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՓՇՐԱՆՔՆԵՐ

ՊՐՈՖ.—ԴՈԿՏ. Ա. ԱՐԲԱՆՍՅԱՆ

ԴԱՎԻԹ ԱԼԱՎԿԱ ՈՐԴՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ՝

730

ԽԶ. ՎԱՍՆ ԶԱՆԱԶԱՆ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ԱՌՆԵԼՈՅ

208ա

735

Այլ վասն ողորմութեան հարցեալ՝ թէ ո՞ր հարկաւոր է տալ, աղքատի, թէ գերոյ: Աւրինակ աղքատի և գերոյ մի է, զի միապէս անստացուածք են երկուր-
հանն, քանզի ժողովուրդքն, որ ի գերութեան էին ի Բաբելոն // աղքատք և
տնանկը կոչեցան: Եւ Պաւլոս տառապեալ կոչէ զմարդկութեան բնութիւնս: Բայց
զանազանութիւն է աղքատացն և գերեաց, քանզի աղքատք աներկիւղ են առա-
ջի բռնատրաց և հարկահանաց, ինկ գերեացն ոչ այսպէս, այլ հակառակն
հանդիպի և փորձ իրացն յայտնէ և ոչ կարաւ որ դրոյ կամ բանի: Այլ և
յոբովնք ոչ են գերի և կեղծաւորին, վասն որոյ և զգուշութեան պէտք են, զի
ստուգիցն եղիցին սուրբն մեր և մի՛ պատրուցայ:

740

ԽԷ. ՎԱՍՆ ԱՄՈՒՍՆԱՅԵԱԼ ՔԱՀԱՆԱՅԻ ԶԳՈՒՇՈՒԹԵԱՆ

208բ

745

750

Այլ վասն ամուսնացեալ քահանայի զգուշութեան կենաց այս է. քահանայ
ընտրեալ և կարգեալ քրիստոսական աւրինացն վերատեսուչ, որպէս կոչեցաւ
ըստ աւետարանին հրամանի, ամենայն պատուիրանաց հպատակել պարտի,
զի հր[ե]շտակ Տեառն Աստուծոյ Ամենակալի է և աւրէնք պահանջին ի նմա-
նէ, զի բանիւ ուսուցանէ և մի՛ վատթարանալ, զի մի՛ պար[ս]տաւորութիւն որ առեալ
ի ժողովրդեանէն գերեսս հարկանիցէ և նա ոչ ունի տալ պատասխանի: Պարտ
է և զգաստութիւն ցուցանել յաւրէնս ամուսնութեան իւրոյ: քանզի քրիստո-
սական խորհրդոյն է սպասաւոր, զոր սերոքէք ծածկաբար ընդունել ոչ բաւեն,
այլ ունեցեաց կարաւտանայր, ապա ո՞րչափ պահանջիցի արժանաւոր մաքրու-
թիւն ի քահանայէն, որ միջնորդ է աստուածային խորհրդոյն: Արդ, պարտ է
քահանայից և սարկաւագաց և ժողովրդականաց յաւուրս քառասորդաց և

742. A ընդրեալ

743. A հպատակեալ

1. Շարունակիված ամսագրի 1952 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր և նոյեմբեր-դեկտեմբեր համարներից:

լինանց զատել անձինս յամուսնական անկողնոց եւ յամենայն տէրունական տաւան եւ մարտիրոսաց եւ կիւրակէի, այլ եւ յաւուր ուրբաթի եւ շորեքշաբաթի:

- Եւ յորժամ մերձի քահանայ առ կին իւր, մի՛ աշխարհականաւոյն ընկող-
 755 մեսցի զգիշերն ամենայն, այլ անցցէ պարկեշտաբար իբրեւ ընդ հուր եւ ան-
 209ա դէն զատեալ՝ ի տեղի իւր ընկողմեսցի եւ երիս աւուրս կարգ ածելով արտաքոյ
 կացցէ եւ ապա հաղորդեսցի սրբութեանն, || իսկ յետ Բ (2) աւուր մատուցանելոյ
 զպատարագն, թէ այնպէս հանդիպի դառնալ առ միմեանս: Այլ թէ հանդիպի
 դիջանալ առանց ամուսնութեան յանկողին կնոջ իւրոյ՝ Ը (8) աւր արտաքոյ
 760 կացցէ սրբութեան: Եւ եթէ յիշատակ կնոջ իւրոյ թացութիւն լինի, աւուրբ
 Բ (2) արտաքոյ կացցէ, իսկ յաւարի՝ Ը (8) աւր եւ ապա հաղորդեսցի: Այլ թէ հոսեսցի յարթութեան վասն կնոջ իւրոյ՝ Ը (8), իսկ յաւարաց՝ կըր-
 կին կարգաւ Գ (3) շաբաթն հաղորդեսցի: Այլ թէ ի քուն ի տեսութեան կնոջ
 իւրոյ գիշացի՝ Ա (1) աւր, իսկ յաւարի՝ երկու եւ յերեքն հաղորդեսցի: Եթէ
 765 ի համբոյր կնոջ իւրոյ անխոնաւ մնայ, անվնաս է, ապա թէ թացաւ՝ աւր մի:
 Եթէ հոսի՝ շաբաթ մի արտաքոյ, իսկ ի համբոյր աւտարաց անխոնաւ մնաց-
 եալ՝ ԻԵ (25) աւր արտաքոյ եւ Ե (5) ի ներքս եւ Ը (30) հաղորդեսցի: Եթէ
 թացութիւն լինի՝ Խ (40) աւր արտաքոյ, Ժ (10) ի ներքս, Ծ.ին (50) հաղորդես-
 ցի, իսկ եթէ հոսի՝ Ժ (10) ամիս արտաքոյ եւ Բ (2) ի ներքս, ի լրման տարոյն
 209բ 770 հաղորդեսցի: Բայց յապաշխարութիւն նախեցեալ վարդապետս || եւ որպէս
 կամի, արասցէ: Այլ թէ յեկեղեցի ի յիշատակ կամ տեսութիւն կնոջն իւր խո-
 նաւեսցի, շաբաթ մի արտաքոյ: Եւ եթէ հոսի՝ Խ (40) աւր արտաքոյ: Թէ առ
 ոտն ի սուրբ տեղիսն ցայտիցի, Բ Խ (երկիցս 40) եւ զտեղին քերեսցեն եւ
 զալաւկապ եկեղեցին լուսացեն եւ զղծեալ տաճարի կարգացցի: Եւ թէ ի համ-
 775 բոյրն դիպեսցի, կրկին կարգաւ արասցէ զայդ: Իսկ եթէ յաւարաց տեսու-
 թիւն խոնաւեսցի՝ Գ (3) շաբաթ արտաքոյ: Եթէ հոսեսցի՝ Բ Ը (երկիցս 30):
 Այլ թէ ի պատարագին [ի] սէր կնոջ իւրոյ խոնաւեսցի՝ Գ (3) շաբաթ արտաքոյ:
 Ապա թէ հոսեսցի՝ կրկին ապաշխարութեամբ Խ (40) աւր արտաքոյ: Իսկ եթէ
 հարեալ ի սէր աւտարի խոնաւի, Խ (40) աւր արտաքոյ ջերմ ապաշխարութեամբ
 780 եւ ԵԾ.ին (50) հաղորդեսցի: Եթէ հոսեսցի՝ ի պատարագին ի բաց կացցէ
 զամենայն աւուրս կենաց իւրոյ: Գ (3) ամս ջերմ ապաշխարութեամբ կացցէ:
 Բայց վարդապետ, որպէս կամի, արասցէ: Եւ եթէ ժամ առնէ եւ թէ յետ ամուս-
 նանալոյն զայսոսիկ յերկոսեանս անխտիր պատարագ մատուցանէ, առանց
 210ա արտասահմանութեան, երեք շաբաթ արտաքոյ կացցէ: Իսկ եթէ սովորու-
 785 թեամբ անհոգացեալ ընդ անիծաւքն՝ որոշեսցի ի սուրբ խորհրդոյն եւ այլ մի՛
 հաղորդեսցի:

ԽԸ. ՎԱՍՆ ՄԱՏՆՈՂԱՅ, ՍՊԱՆՈՂԱՅ, ԱՅՐԵՑՈՂԱՅ
 ԵՒ ԿԻՆ, ՈՐ ԶՏԱՂԱՅՆ Ի ՓՈՐԻՆ ՍՊԱՆԱՆԷ, ԱՅՍ Է ԿԱՆՈՆՆ

- Եթէ որ մարդ լինի սպանեալ, կամ մատնեալ, կամ այրեցողութիւն խորհ-
 790 եալ, կամ կին զտղայն ի փորին սպանանէ զեղով, կամ կոխելով կամ զոր-
 մով անկանելով, եւ այլ որ յարանց կամ ի կանաց մերձ կայցէ եւ սպանանո-
 յին այնմիկ խորհրդով կամ բանիւ կցորդէ կամ կարող էր ապանելոյ զրկելոյն,
 կամ յանձնէ կամ այլոց ազդ առնելով եւ անփայթ արար, հաղորդ է սպանու-

761. Ա եւ սողա չի!

767. Ա ի Խ

768. Ա Մ

795 թեան նորա, նոյնպէս՝ այրեցողին եւ սպանողի զմանուկն: Ապա թէ ոչ է խորհրդակից կամ բանիւ կցորդ եւ ամենեւին անհաս է իրացն, զի ա՛րդ ի մերձաւորաց եւ ի դրացեաց պարտաւորին ընդ նմա:

210բ

// ԽԹ. ՎԱՍՆ ԱՅՆՈՅԻԿ, ՈՐ ԸՆԴ ՄԵՐՁԱՒՈՐԵԼՆ ԱՐԿԱՆԵՆ ԶԼԵԶՈՒՆ

Այլ թէ ամուսնոյ կամ աւտարի արկանէ զլեզուն ի բերան, այս առաւել
 800 դազրալի թուի լեզուան շնալ: Սա ի մէջ շնութեան, եւ արուագիտութեան եւ
 մծղնէից տեսանի բան: Այդ, առաւել քան զշնացողացն, կրկին հատուցէ
 զապաշխարութիւն: Իսկ եթէ անսգայեալ յանարժանութիւնս յայս, գայցեն ար-
 կանեն զմատուցս յիս աղբոյ միմեանց եւ կանանց ընդ ծննդական մասունս
 վարեն: Այլ եւ կանայք վարդապետութեամբ սատանայի արտաքոյ բնութեան
 805 աւտար իմն գործի[ւ] արարեալ ի նիւթոյ, կապեն ընդ աղբեր: Եւ այնպէս առ-
 նաբար ընդ ընկերս մերձաւորին: Արդ, որ յաղագս լեզուին եւ մատանց եւ կա-
 նացն զուպին այս է: Եթէ որ զայսոսիկ գործելոյ զղջացի, չիւրմ ապաշխա-
 րութեամբ՝ քաւեսցէ, յետին թաւակին արժանաւսցի: Ապա թէ ի շար սովո-
 րութեան անդառնալի մնացցէ, զրկեսցի յետին թաւակէն: Այլ կանայք, որ
 211 ա զուպին առնեն՝ թէ փոքրաւ/զունից կամ յաղախնաց իւրեանց [առնիցեն]
 810 աւամայ գորով նոցա, թեթեւագոյն է ապաշխարութիւն: Իսկ զիտողացն եւ
 արարողացն զշարութիւն, արուագիտացն է կարգ, եւ նոցա չիւրմ ապաշխա-
 րութեամբ՝ թէ լիցին յետին թաւակին արժանի:

Մ. ՊԷՍՊԷՍ ՎԵՐԱՔԱՒՈՒԹԻՒՆ ԽՈՍՏՈՎԱՆԱԿԱՆ ԲԱՆ
 Ի ԿԱՆՈՆԱՅ ՀՐԱՄԱՆԱՅ ՀԱՐՑՈՒՄՆ

815 Կոյս ընդ կուսի շնայ՝ զի՛նչ է պատիժն: Նախ առաջին կոյսն կուսի հան-
 դիպեցուցանել հրաման է կանոնական: Ապա թէ յառաջ քան զմիւսերուն կոյս
 ընդ կուսի շնայ, երեք ամ ապաշխարեսցեն արտաքոյ եւ երկու՝ ի ներքս եւ յետ
 այնորիկ ամուսնացուցեն զնոսա, ոչ զնեղով պսակ, զի ապականեցին զկու-
 սովիւն: Այլ զկոյս ամուսնացելոյ տալ ոչ է աւրէն, ապա թէ հարկաւորին տալ,
 820 կուսին պսակ դիցեն՝ թէ այր է թէ կին, իսկ ամուսնացելոյն՝ ոչ: Այլ ի սոցանէ
 թէ որ մեղաւք շաղախեալ իցէ, չէ պարտ զուգիլ զնա ընդ կուսի: Իսկ եթէ այրի
 211 բ եւ ամուսնացեալ // գտանի ի շնութեան, հինգ ամ արտաքոյ եւ երկու ի ներքս
 ապաշխարէ: Եւ զարինակ ապաշխարութեան երիս կարգս սահմանել ի սրբա-
 պահութիւն, երեք Խ (40) ի տարոջն: Այլ թէ երկու ամուսնաւոր շնանան, աւե-
 825 լիւք եղիցի ապաշխարութիւն: Այլ ազգականի՝ ըստ հեռաւորութեան եւ մեր-
 ձաւորութեան զանազանի ապաշխարութեամբ: Քանզի հաւրաքոյր եւ մարա-
 քոյր հաւասար ունին, նոյնպէս եւ ի նոցանէ ծնունդքն զկարգ ապաշխարու-
 թեան: Արդ, ծնունդք նոցա թէ պոռնկին ընդ միմեանս՝ Թ (9) ամ ապաշխա-
 րեսցեն: Իսկ եթէ ընդ հաւր կամ ընդ մար քեռ՝ ԺԲ (12) ամ ապաշխարեսցեն:
 830 Այլ թէ ընդ քեռ որ մտարիւրիցէ, թէ առ ի հաւրէ, առ ի մարէ, թէ յերկոցունց,
 միապէս ունին սոքա, մինչեւ ցքսան ամ ապաշխարութիւն դիցեն: Իսկ եթէ
 քսանամեայ կամ երեսունամեայ մեղիցէ, ի մարմնի հաղորդեսցի, ապա եթէ ի


800. A մրծղնայից

802. B մատունս

804. A նութոյ

805. A ընդերս

809. A զուպին



Մի Էջ Դավիթ Ավակյան որդու դատաստանագրքի ամենահին՝ 12—13-րդ
դարի № 5607 ձեռագրից

- 212ա 835 վեր կոյս՝ յետին թաւակին: Թէ յանձառան հպ[ես]ցի [ի] մայր կամ ի մարա-
քոյր, մինչ ի վախճան զամենայն աւուրս կենաց իւրոց ի գողենոցի ապաշխա-
[րեսցէ] եւ յետին թաւակին թէ լիցի արժանի: || Ապա թէ ընդ հարսին ոք
սլոռնկի, այնպէս է թէ ի քեռ իւր սլոռնկի, բայց ի կարգէն յերկոց մասնէն զմինն
պակասեցուցեն: Իսկ որ շնայ ընդ նու իւր, մի՛ մերձեցցի ի կին իւր մինչեւ
ապաշխարեսցէ, նոյնպէս եւ հարսն՝ առ այր իւր: Բայց վ[արդա]պ[ետ] [իշխանք]
840 հն կարճել զժամանակն: Եթէ հրապարակաւ հանդիսացաւ մեղքն,
մեկնեցեն զկինն յառնէ իւրմէ, այրն կին արասցէ, իսկ կինն այլում մի՛ լի-
ցի: Եթէ [ընդ] զոքանչի շնայ, այնպէս է կարգն, որպէս ընդ մարուին, մա-
սամբ միով պակաս: Եւ ի հրապարակելն՝ թողցէ այրն զկին իւր: Իսկ եթէ ի
ծածով ի կամս իւր է թողողն եւ ոչն, բայց մի՛ մերձեցցի ի կին իւր առանց
ապաշխարութեան:

845

ՄԱ. ՎԱՍՆ ԿԱՆԱՅ, ՈՐ ՅՂԻ ԻՑԵՆ, ՄԻ՛ ՄԵՐՁԵՍՅՈՒ ԱՌ ԱՅՐ ԻՒՐ

- 212բ 850 Այլ կին, որ յղի իցէ, մի՛ ամուսնացցի, մինչեւ ծնցի մանուկն: Եւ այս է
պատճառն, զի յուով խեղաթիւրութիւնք, որ լինի ի մարմինս մանկանն, յայնմ
ժամու յամուսնութենէն լինի, որ յղի իցէ եւ ի կանաց կարգի: Արդ, չէ՛ պարտ
յայս՝ Բ (2) ժամանակի մերձեանալ, || մանաւանդ քահանայից: Եթէ ոք հեղ-
զացի պատուիրանիս, մեծաւ ապաշխարութեամբ որոշեցեն ի հաղորդութե-
նէ, իսկ քահանայք՝ ի պատարագելոյ զՔրիստոս: Այսպէս՝ ի տաւնի կամ ի
կիրակէի մի՛ ոք մերձեցցի: Ապա եթէ յանգիտութեան՝ շաբաթ մի պահեսցէ,
ապա եթէ գիտէր եւ ամուսնացաւ՝ քառասուն աւր պահեսցէ: Եւ թէ աներկիւղ
սովորութեամբ զնոյն առնէ՝ ընդ անիծիւք է: Իսկ թէ քահանայի հանդիպի այս
855 մի անգամ, Խ (40) աւր պահաւք արտաքոյ կացցէ սրբութեան: Ապա թէ սովո-
րութեամբ առնէ զայն, ընդ անիծիւք է եւ ի բաց կացցէ պատարագելոյ Քրիս-
տոս, ապա թէ յետոյ զղջացցի, առաջնորդն իշխան է՝ Բ (2) ամ ապաշխարէ՛
պատարագեսցէ:

ՄԲ. ՎԱՍՆ ԱՅՆՈՅԻԿ, ՈՐ ԵՐԿՆՈՒՆ Ի ՇՆՈՒԹԵԱՆ

- 213ա 860 Այլ թէ ոք ի շնութեան երդնու՝ թէ ոչ գիտեմ, կամ երդնու խաբել զայրի,
կամ զկոյս, այսոքիկ մի ունին զկարգն՝ կրկին ապաշխարել զշնութեան եւ
զերդմանն եւ զխաբեալն զկին արասցէ: Եւ եթէ ի շնալն կամ յամուսնանալն
ընդ կնոջ իւրում զսողոմացոցն գործէ, || չարագոյն տեսանի սոքա, քան զար-
ուացն, զի կարեացն լուծումն մերձէր: Արդ, ապաշխարեսցեն զշնութեանն եւ ըստ
865 սողոմական կարգի, բայց կնոջ իւրում առաւել տեսանի վասն զպսակն ապա-
կանելոյ եւ զարութիւն սրբութեան պղծելոյ: Բայց որ խաբեցաւ՝ թէ կին իցէ,
զնոյն կրեսցէ կարգ, որ շնութիւն գործէ: Ապա թէ կինն անյաւժար ի շար առ-
նելոյն է եւ բռնադատեցաւ՝ յերիցն, զոր այրն կրէ, զմին կինն կրիցէ կարգ:

ՄԳ. ՎԱՍՆ ՈՐ ՇՆԱՅ Ի ԲՈՉՏԱՆ

- 870 Այլ շնացեալքն ի բողոտան, կրկին կրեսցեն զկարգ ապաշխարութեան: Իսկ
առանց առն պոռնիկ կանայք՝ դեղ առնուն չղանալ, ընդ ա՛յնոսիկ համարին

833. A մարաքոյր բառից հետո կամ ի մարու

861—862. A զշնութիւն եւ զերդումն եւ զխաբելն

870. A շնացեալ ի բողոտան, կրկին կրկին կրեսցէ

- նոքա, որք հարհարեն՝ յորովայնի սպանանել զմանկունս, միով մասամբ պա-
կաս յալնցանէ ապաշխարեսցեն եւ թէ լիցին արժանի յետին թաւակի: Եւ որ
վասն յղանալոյ առնու[ն] դեղ ամուլքն, ամ մի ապաշխարե[սցեն], զի բնու-
թեան արարիչ Աստուած է: Բայց եթէ ի ցաւոց պատահի արականին կամ ի գա-
կանին ծննդական դարովթեան խափանումն լինել՝ ի բժշկաց // առողջանալ,
անխիղճ են, այլ ո՛չ ի դիւաց կամ ի կախարդաց, ի ջրուղթից կամ յալլ
լրաց: Այլ են ոմանք ի կանաց յանաւրինաց, որ դեղ տան արանց կամ հո-
մանեաց, յաւելորդաց անտի, որ ելանէ ի մարմնոյ իւրեանց, խառնեն ի կերա-
կուրն, այնպիսիքն նզովին ի մահ եւ ի կեանս եւ յետին թաւակէն զրկեսցին:
Ապա թէ խոստովանին եւ ծանր ապաշխարութիւն յանձն առնուն, զմծղնէիցն
զիցեն նոքա կարգ: Մծղնայքն են պոլիկեանք, քանզի նոքա եւ կանայք իւր-
եանց խառնեն յամենայն ի կերակուր եւ յրմպելիքն, ինքեանք պղծին եւ զայլ
անմեղ անձինս, տալով նոքա, ապականեն: Այսպիսեաց դեղատուաց աղու-
սադրոշմ՝ դնեն ի ճակատի եւ զշիլ ոտիցն հատանել եւ յուրկանոց տալ, զի
սպասաւորեսցէ նոքա եւ այնպէս քաւեալ զմեղսն՝ յետին թաւակին արժանի
լինիցի:

ՄԳ. ՎԱՍՆ ԱՅՆՈՅԻԿ, ՈՐ ՍԵՐՄ ՈՐԴԵՄՆՈՒԹԵԱՆ ԱՊԱԿԱՆԵՆ

- Այլ ոմանք, արք անաւրէնք, ի շնալն իւրեանց կամ քինով կանանց իւր-
եանցն, զսերմ որդեծնութեան, զոր հաստատեաց Տէր // յաճումն, նոքա զհա-
կառակն գործեն Արարչութեան, այսինքն՝ արտաքս հեղուն, զոր նզովէ յեկե-
ղեցի Աստուծոյ: Իսկ եթէ հատանի ի չարէն, բազում անգամ զայն արարեալ,
կարգ սպանողացն եղիցի: Բայց վարդապետք հայեցեալ ծանր ապաշխարու-
թիւն՝ իշխան են կարճել զժամանակն:

ՅԵ. ՎԱՍՆ ԱՅՆՈՅԻԿ, ՈՐՔ ՃՄԼԵՆ ԶՄԱՐՄԻՆՍ ԻՐԻՆԱՆՑ ՇԱԽԱՓՄԱՄԲ

- Այլ են ոմանք, որ չար սովորութեամբ ճմլեն զմարմինս իւրեանց՝ յեղումն
առնել խիտից: Եթէ անգիտութեամբ՝ ժն (15) ամեայ գոլով ոք արար զայն
մի անգամ՝ երկու ամ ապաշխար[եսցէ]: Իսկ յետ այնորիկ, զնոյն գործել ի
քսանամենին՝ Գ (3) ամ ապաշխար[եսցէ], եւ ի քահանայութիւն այնպիսիքն մի՝
հկեսցեն: Ապա թէ յետ ամուսնանալոյ զնոյն սովորութիւն բերէ յինքեան,
զսահման չարագործացն ընկալցի, քանզի որ ինքն ընդ ինքն շնայ՝ կցորդ է
նոքա:

ՄԶ. ԱՐՈՒԱԳԻՏ[ԱՅՆ ԵՒ ԱՆԱՍՆԱԳԻՏԱՅՆ]

- Այլ վասն արուագիտաց եւ անասնագիտաց մի է բան: Եթէ ի հնգետա-
սանամենիցն՝ գործեսցեն՝ ժն (15) ամ ապաշխարեսցեն, ի քսանամենիցն՝
ի (20) ամ, երեսնամենիցն՝ Լ (30) ամ: Իսկ քան // զայս ի վեր ժամանակն՝
մինչև ցար մահուն ապաշխարեսցեն եւ յետին թաւակէն մի՝ զրկեսցին: Իսկ
աւտարացն եւ ազգայնոց առաւելութիւնն միապէս տեսանի, թէ ո՛չ շարն միա-

882. ԴԵ պալլիկեանք

890. Ա սերմ

891. Ա նզովե[ս]ցի

894. Ա իշխան

897. Ա ոք շիք

պէս տեսանի: Այլազգայնոյն եւ քուրդին զմի ունին բան: Իսկ սուրբ եւ ան-
 910 սուրբ անասնոցն չդոյ զանազանութիւն, այլ զերկոսեանն սպանանել հրամա-
 յեն արէնքն, զի մի՝ յիշատակ չար յաւիտեան մնացէ: Իսկ որք ոչ արկին
 ընդ խոստովանութեամբ եւ կերան ի մսոյն կամ ի կաթէն յանգէտս՝ Գ (3) ամ
 ապաշխարեսցեն եւ ամանքն ջարդեսցին: Ապա թէ գիտութեամբ կերան, ի
 915 քահանայութիւն մի՝ եկեսցեն այնպիսիքն: Բայց վարդապետք իշխան են՝ որ-
 պէս կա[մին]: Եւ որ յանգէտս կերան, եկեսցեն ի քահանայութեան: Նոյնպէս
 թէ քահանայ զկաթն կերիցէ, յետ Խ (40) ատուր հաղորդեսցի, ապա թէ գիտու-
 թեամբ՝ ի բաց կացցէ ի պատարագելոյ զՔրիստոս:

ԾԷ. ՎԱՍՆ ՊՈՌՆԻԿ ԿԱՆԱՆՑ, ՈՐ ԶՄԱՆՈՒԿՍ ՍՊԱՆԱՆԵՆ

Այլ պոռնիկ կանայք, որ զմանուկս սպանանեն, ցար մահուն ապաշխա-
 920 րեսցեն, իսկ ծնաւոր խրատել զմանկունս իւրեանց, կամ այր՝ զկին: Եթէ խնա-
 215ա մով խրատեսցէ եւ պատահէ մահ, Ե (5) ամ // արտաքոյ կացցէ ի սրբութենէ՝
 Բ (2) ի ներքս եւ ապա հաղորդեսցի: Իսկ եթէ անխնայ, գազանարար՝ արեան
 պա[րտ է]: Ապա թէ կամաւ սպան[անիցէ] դեղով, կամ քինու, կամ նախանձու,
 սոքա ամենեքին մինչեւ ցմահ ապաշխարեսցեն, խորգ եւ մոխիր, եւ յետին
 925 թաւշակէն մի՝ զրկեսցին:

ԾԸ. ՎԱՍՆ ԳՈՂՈՑ ԵՒ ՍՊԱՆՈՂԱՑ, ՈՐ ԸՄԲՈՆԵԱԼ ՍՊԱՆԱՆԵՆ

Եթէ ոք զգող կամ շնացող ըմբռնէ առ իւր կին կամ աղախին եւ սպան[ի]-
 ցէ, սպանող է: Զնոյն՝ եթէ առ մայր կամ առ քոյր ըմբռնէ ի նոցանէ, թէ սպա-
 ն[անէ], արեան պարտ է եւ սպ[անանիցի]:

930

ԾԹ. ՎԱՍՆ ԱՅԼԱԶԳԵԱՑ, ՈՐ ԱՐՇԱԽԱՆՍ ԱՌՆԻՑԵՆ

Այլ թէ յանարինաց արշաւանս առնիցեն առանց պատճառի ի վերայ
 քրիստանէից եւ ի ընդդիմամարտելն սպանութիւն հանդիպի, անպարտ են,
 Դ (4) ամ բաւական է վասն սրբութեան անձին: Ապա թէ ի ձեռն կալեալ բերէ
 եւ կամաւ սպան[անէ], արեան պարտ է: Այլ վասն խնդրելոյ կամ զրաւ
 935 առ[ն]լոյ իրաւապէս եկեսցեն այլազգիք յերկիր քրիստոնէից, այլիցեն կամ
 սպանցեն եւ քերի առնուցուն, եթէ ի նոցանէ պատահէ սպանութիւն, սոստա-
 նուն քրիստոնեայքն վճարեն, եւ կրկնապատիկ արեան պարտականք են:
 215բ // Իսկ գիշերամարտութեան պատահեալ սպանութիւն առանց պատճառի, այն-
 պէս է, որպէս պարզաբար ի պատերազմի:

940

Կ. ՎԱՍՆ ԱՅՐԵՑՈՂԱՑ

Այլ վասն այրեցողաց՝ եթէ համբարաց միայն եղիւր կրակ մի անգամ եւ
 եկեսցէ ի զղշումն, է (7) ամ ապաշխ[արեսցէ]: Ապա թէ անասնոց վնասե[ա]ց՝
 Ժ (10) ամ: Իսկ եթէ մարդ վնասեցաւ ի տանն, ուր զհուրն եղ, ի խորգ եւ ի
 մոխիր, զամենայն ատուրս կենաց ապաշխարեսցէ եւ թէ լիցի յետին թաւշակի
 945 արժանի:

(Շարունակելի)